



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԹԵՄԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԵՋ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ ՀՕՄ-Ի ՆՆՋԵՑԵԱԼՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Արեւմտեան մեր Թեմին մէջ, տարիներու աւանդութիւն է խունկ ու աղօթքով յիշատակել Հայ Օգնութեան Միութեան ննջեցեալները:

Արդ, ընդառաջելով ՀՕՄԻ Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան խնդրանքին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան տնօրինած է, որ Կիրակի, 22 Փետրուար 2009ին, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան յատուկ արարողութիւն տեղի ունենայ ՀՕՄԻ ննջեցեալ ծառայողներու հոգիներուն համար:

ՆԱԵՒ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԿՈՉ

Նաեւ, Կիրակի, 22 Փետրուարին, ու Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինութեամբ, ի պատասխան ՀՕՄԻ խնդրանքին, մեր եկեղեցիներուն մէջ նուիրահաւաք տեղի պիտի ունենայ ի նպաստ ՀՕՄԻ: Այս արշաւը մաս կը կազմէ ՀՕՄԻ 100ամեակին նուիրուած աշխատանքներուն: Ծանօթ է, որ այս մեծ կազմակերպութիւնը յառաջիկայ տարի, 2010ին պիտի տօնէ իր հիմնադրութեան 100ամեակը: Նուիրահաւաքը առիթ մը պիտի ըլլայ մեր ժողովուրդին՝ գործնապէս մասնակից ըլլալու ՀՕՄԻ գործին, որ տասնամեակներ շարունակ տարուած է ժողովրդային լայն զօրակցութեամբ: Մեր եկեղեցիներուն մէջ պիտի ընթերցուի այս առիթով Առաջնորդ Սրբազանին կոչը:

REQUIEM SERVICES IN PRELACY CHURCHES FOR A.R.S. MEMBERS

For many years now, each year special requiem services are offered in Prelacy Churches for departed members of the Armenian Relief Society. This year, requiem services will be offered on Sunday, February 22nd, in all churches following Divine Liturgy.

Also on this day, by the request of the Regional Executive of the A.R.S. and the ordinance of H.E. Archbishop Moushegh Mardirossian, funds will be

raised in all churches to benefit the A.R.S. as they prepare to celebrate their centennial next year. The Prelate's call to support this effort will also be read.